ԶԵՅԹՈՒՆԸ ԵՎ 1896 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 30-ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հայ ազատագրական շարժման յուրաքանչյուր դրվագի ուսումնասիրությունն ունի պատմական կարևոր արժեք։ Այս առումով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Զեյթունի 1895—1896 թթ. ապստամբության հետ առնչվող հարցերը։

Զեյթունցիները զենքի դիմեցին հայության համար ողբերգական 1895—1896 թթ., երբ սուլթանական կառավարությունը փորձում էր իրականացնել մի ողջ ժողովրդի բնաջնջման մանրամասն մշակված ծրագիրը։ Լեռնականները որոշեցին ապստամբել, կանխելու համար վերահաս կոտորածը։ Եվ գավառակի հայ բնակչությունը, պաշարված մեծ բանակներով ու մուսուլմանական ավազակախմբերով, կտրված հայաշատ կենտրոններից, կարողացավ արժանի դիմադրություն ցույց տալ թշնամուն։ Հայտնի է, թե ինչպես ավարտվեց քաջարի զեյթունցիների հերոսամարտը։ Սուլթանական Թուրքիան եվրոպական վեց տերությունների միջնորդությամբ բանակցությունների մեջ մտավ ապստամբների հետ և կնքեց կայսրության համար բավականին ստորացուցիչ համաձայնագիր[1]։

Արդ, ուշադրություն է գրավում սուլթանի կողմից օտար պետությունների միջնորդությունն ընդունելու և նման համաձայնագրի ստորագրման բուն փաստը։ Աբդուլ Համիդի կառավարման տարիների պատմությանը քիչ թե շատ լավատեղյակ ամեն ոք կպնդի, որ սուլթանը նման քայլի կարող էր դիմել միայն հարկադրված կերպով, ինչ-ինչ պայմաններից ելնելով։ Հարկ է առանձնացնել պատճառների երկու հիմնական խումբ, որոնք օբյեկտիվորեն ազդեցին Զեյթունի ճակատագրի վրա։ Դրանցից առաջինը կապված էր արտաքին քաղաքական իրադրության, երկրորդը՝ Օսմանյան կայսրության խորացող ճգնաժամի հետ։

Ապստամբությունը բռնկվեց միջազգային քաղաքական այնպիսի լարված պայմաններում, երբ մերձավորարևելյան հարցը մտնում էր իր վճռական փուլը և ընդհարման վտանգ կար ներքին հակասություններից ծվատվող եվրոպական պետությունների մեջ։ «Արևելյան խնդրի» վերաբացումը սպառնում էր հանգեցնելու համաեվրոպական կոնֆլիկտի։ Մերձավոր արևելքում խաչաձևվում էին իմպերիալիստական խմբավորումների կենսական շահերը։ Իրոք, ճիշտ է նկատել ֆրանսիացի հայտնի պատմաբան Վանդալը, որ «Արևելյան հարցը, դա ըստ էության Արևմտյան հարց է»[2]։ *1890-ական թվականներին մեծ տերությունները, անժամանակ համարելով հարցի արծարծումը, կանգնած էին Թուրքիայի ստատուս-քվոն պահպանելու քաղաքականության դիրքերում։ Թերևս, բացառություն էր կազմում Մեծ Բրիտանիան, որը, ելնելով արևելյան քաղաքականության իր շահերից, վերստին հագել էր կայսրության քրիստոնյաների՝ հատկապես հայերի, պաշտպանի դիմակը*[3]։ *Սակայն բրիտանական կառավարող շրջանները ևս, մտահոգված Անգլիայի քաղաքական մեկուսացվածության փաստով, չէին համարձակվում միայնակ հանդես գալ Արևելյան*

---

[1] *«Զեյթունի պատմագիրք», Բուենոս-Այրես, 1960, էջ 634, Ա ղ ա ս ի, Զեյթուն և իր շրջակաները, Բեյրութ, 1968, էջ 354—356, Հ. Պ ո ղ ո ս յ ա ն, Զեյթունի պատմություն, Երևան, 1969, էջ 355—356։*

[2] Цит. по Ф. А. Ротштейн, Международные отношения в конце XIX века, М.—Л., 1960, с. 387.

[3] «История дипломатии», т. 2, М., 1963, с. 333—337.

հարցում։ Նման պայմաններում, բնական է, որ Կ. Պոլսի եվրոպական բոլոր դեսպանությունները Զեյթունի ապստամբության լուրն ընդունեցին մեծագույն անհանգստությամբ[4]։ Այսպես, Կ. Պոլսում ֆրանսիական հանրապետության դեսպան Կամբոնը արտաքին գործերի մինիստր Հանոտոյին ներկայացրած զեկուցագրում (1895 թ. հոկտեմբերի 31), անդրադառնալով Զեյթունից ստացվող լուրերին, խուճապահար եզրակացնում էր. «Անարխիան համատարած է և թվում է, որ բացվել է հեղափոխական ժամանակաշրջանը»։ Դեսպանը հատկապես շեշտում էր, որ հնարավոր չէ կանխագուշակել, թե այս իրադարձություններն ինչպիսի հետևանքներ կունենան սուլթանի, Թուրքիայի և անդամ ողջ Եվրոպայի համար[5]։

Պակաս անհանգստացած չէր և թուրքական կառավարությունը։ Զեյթունի խնդրի երկարաձգումը կարող էր էլ ավելի բարդացնել Հայկական հարցի շուրջ ստեղծված միջազգային քաղաքական գրությունը և հարմար պատրվակ ծառայել եվրոպական որոշ պետություններ համար՝ տիրելու ստրատեգիական ու տնտեսական մեծ նշանակություն ունեցող կիլիկյան բարեբեր հողերին։ Ավելին. մեծ տերություններն ազգային-ազատագրական պայքարի հետագա վերելքից վախենալով, կարող էին հրաժարվել Թուրքիայի ստատուս-քվոն պահպանելու սկզբունքից և դիմելով փոխադարձ զիջումների՝ բաժանել կայսրությունը։ Նման ենթադրությունը հաստատող փաստերն առկա էին։ Անգլիան, ձգտելով դուրս գալ մեկուսացումից, համառորեն փորձում էր համաձայնության եզրեր գտնել Ռուսաստանի հետ։ Դեռևս 1894 թ. նոյեմբերի 9-ին արտասանած իր ճառում Մեծ Բրիտանիայի պրեմիեր-մինիստր լորդ Ռոզբերին ակնարկեց Ռուսաստանի հետ համաձայնության գալու հնարավորությունը[6]։ Նրա հաջորդը՝ մարքիզ Սոլսբերին, ավելի առաջ գնաց այս ուղղությամբ։ 1895 թ. հուլիսի վերջերին Մեծ Բրիտանիայում Գերմանիայի դեսպանի հետ զրույցի ժամանակ նա փաստորեն առաջարկեց բաժանել կայսրությունը, ցավ հայտնելով, որ Ղրիմի պատերազմի նախօրյակին Անգլիան մերժեց Նիկոլայ I-ի նմանատիպ առաջարկը[7]։ Դժվար է ասել, թե ինչպիսի հեռուն գնացող նպատակներ ուներ փորձառու դիվանագետը, արդյո՞ք նա տրամադրված էր Ռուսաստանին թույլատրել գրավելու Արևմտյան Հայաստանն ու նեղուցները։ Թերևս, դա հերթական քայլ էր խաղաթղթերը խառնելու և Եվրոպայի միասնական հակաանգլիական ճակատը քայքայելու համար։ Ինչևէ. Մեծ Բրիտանիան 1895—1896 թթ. շահագրգռված էր անգլո-ռուսական մերձեցմամբ և պատրաստ էր դիմելու որոշ զիջումների[8]։

Պարզ էր նաև, որ ռուս-թուրքական «բարեկամությունը» չէր կարող երկարատև լինել։ Ռուսաստանի մերձավորարևելյան քաղաքականությունը դրժգոհություններ էր առաջացնում երկրի ազդեցիկ որոշ շրջաններում։ Կ. Պոլսում ռուսական դեսպան Նելիդովը, հենվելով քաղաքական բավականին հզոր ուժերի աջակցության վրա, 1892 թ. ի վեր համառորեն առաջ էր քաշում Բոսֆորը գրավելու ծրագիրը[9]։ Արագորեն կառուցվում էր սևծովյան նավատորմը, որը 1895 թ. որոշակի ուժ էր ներկայացնում[10]։ Վերջապես, եթե Ռուսաստանը

---

[4] „Ministere des Affaires etrangeres. Documents diplomatigues. Affaires armeniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman, 1893—1897", Paris, 1897, p. 162—164, p. 171, 172; „Turkey", № 2 (1896), Correspondence relative to the Armenian Question and Reports from Her Majesty's consular offices in Asiatic Turkey", London, 1896, p. 57 58, 60.

[5] „Affaires armeniennes . . .", 1893—1897, p. 162—164.

[6] Ф. А. Ротштейн, *նշվ. աշխ.*, *էջ 273*։

[7] *Նույն տեղում, էջ 307, 308*։

[8] «История дипломатии», т. 2, с. 335—338.

[9] В. Хвостов, Преблемы захвата Босфора в 90-х годах 19-го века, «Историк-марксист», т. 20. М., 1930, с. 108—109.

[10] «Красный архив», т. 4, 5, М.—Л., 1931, с. 51.

1895 թ. օգոստոսին հայտարարում էր, որ կընդդիմադրի Հայկական հարցում որևէ այլ պետության միայնակ հանդես գալուն կամ Վիեննայում Լոբանով-Ռոստովսկին համաձայնություն էր կայացնում Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիությունը ևս մի որոշ ժամանակ պահպանելու համար[11], ապա նույն Ռուսաստանը կատարում էր այս հավաստիացումներին տրամագծորեն հակադիր քայլեր։ Այսպես, 1895 թ. հուլիսի 6-ին գումարվում է հատուկ խորհրդակցություն, որին ներկա էին ռուս բարձրաստիճան զինվորականության բազմաթիվ ներկայացուցիչներ։ Ի մի բերելով 1891 թ. ծովային ծրագրի կատարման արդյունքները, այս խորհրդակցությունը նշում է Ռուսաստանի լիակատար ռազմածովային պատրաստվածությունը Կ. Պոլիսը գրավելու համար։ Բայց է՛լ ավելի հետաքրքիր է այն փաստը, որ սույն ազդեցիկ խորհրդաժողովի կազմած արձանագրությունը կարճ ժամանակում հաստատում է Նիկոլայ II կայսրը և դրանից ընդամենը մի քանի ամիս անց՝ 1895 թ. սեպտեմբերին, Նելիդովը կրկին առաջ է քաշում Բոսֆորի գրավման ծրագիրը[12]։

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա Բ. դուռն այստեղ ևս մտահոգվելու պատճառներ ուներ։ Այս պետությունն անգլո-ֆրանսիական խոր հակասությունների պատճառով և իր տնտեսական շահերից ելնելով Արևելքում հանդես էր գալիս դաշնակից Ռուսաստանի հետ կողք կողքի՝ քաղաքականության հիմքում դնելով Օսմանյան կայսրության ամբողջականության և տարածքային անձեռնմխելիության սկզբունքը։ Նա, հսկայական կապիտալ ներդրումներ կատարելով Թուրքիայի տնտեսության մեջ (շուրջ 2,5 միլիարդ ֆրանկ), վախենում էր վերջինիս ֆինանսական սնանկացումից և շահագրգռված էր կայսրության ներքին քաղաքական դրության կայունության մեջ։ Այդ նպատակով, ձգտելով միջազգային վերահսկողություն սահմանել Թուրքիայի վրա, Ֆրանսիան հանդես էր գալիս բարեփոխություններ անցկացնելու օգտին[13]։

Թուրքիային սիրաշահելու քաղաքականություն էին վարում Գերմանիան և Ավստրո-Հունգարիան, որոնք բազմիցս արտահայտվել էին Օսմանյան կայսրության տարածքային անձեռնմխելիության պահպանման օգտին։ Միևնույն ժամանակ, Ավստրո-Հունգարիան իր ավանդական քաղաքականության համաձայն դեմ չէր օգտվելու ստեղծված ճգնաժամից[14]։ Ինչպես վկայում են փաստաթղթերը, ավստրիական կառավարությունը հատկապես 1895 թ. աշնանը որոշակի քայլեր է կատարում Հայկական հարցում Անգլիայի հետ համատեղ հանդես գալու նպատակով[15]։

Եթե այս ամենին ավելացնենք Կրետեի և մակեդոնական հարցերի կապակցությամբ խիստ սրված հույն-թուրքական ու թուրք-բուլղարական հարաբերությունները, ապա պարզ կդառնա միջազգային այն լարված իրավիճակը, որ ստեղծվել էր 1895 թ. աշնանը և 1896 թ. ձմռանը։

Դրությունը բարդացել էր նաև նրանով, որ դեռևս Զեյթունի ապստամբության առաջին շրջանում հիշյալ եվրոպական տերությունները, ամեն րոպե սպասելով իրադարձությունների անսպասելի շրջադարձի, շտապում էին ռազմածովային որոշ էսկադրաներ տեղափոխել Ալեքսանդրեթի և նրան հարող շրջանների ջրերը։ Այսպես, 1895 թ. հոկտեմբերի 25-ին անգլիական ծովակալությունը Միջերկրածովյան նավատորմի հրամանատարին հրամայում է դեսպանի պահանջի դեպքում անհապաղ ռազմանավեր ուղարկել Ալեքսանդրեթ կամ հարևան նավահանգիստներից որևէ մեկը[16]։ Նոյեմբերի 10-ին ռուսական «Ռյուրիկ» և «Դմիտրի Դոնսկոյ» նավերը թողնում են Կրոնշտադտը՝ Լեվանտ

11 Малькольм Мак-Колль, Султан и державы, СПб., 1897, с. 47. 237.

12 В. Хвостов, նշվ. աշխ., էջ 109, 110։

13 «История дипломатии», т. 2, с. 339, 340.

14 Малькольм Мак-Колль, նշվ. աշխ., էջ 60, 62։

15 «Turkey», № 2 (1896), p. 38, 39.

16 Նույն տեղում, էջ 60։

ժամանելու նպատակով[17]։ Նոյեմբերի 17-ին իտալական հինգ նավերից կազմված առաջին էսկադրան ուղղություն է վերցնում դեպի Զմյուռնիա[18]։ Նոյեմբերի 16-ին Կիլիկիա է պատրաստվում նավարկել ավստրո-հունգարական էսկադրան։ Նոյեմբերի 22-ին ֆրանսիական նավախումբը ժամանում է Զմյուռնիա[19]։ Նոյեմբերի 8-ին Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան Կամբոնն արտաքին գործերի մինիստրին հայտնում է, որ ռուսները դիրքեր են գրավում Հայաստանի սահմանների վրա և Սեբաստոպոլում մարտական պատրաստության են բերում իրենց էսկադրան[20]։

1896 թ. հունվարի մեկին Կ. Պոլսի անգլիական դեսպանն այցելելով Բ. դուռ, պահանջում է անհապաղ պատասխան տալ Զեյթունի խնդրում կառավարության բռնած ընթացքի վերաբերյալ։ Դեսպանն ավելացնում է, որ Ուռհայի կոտորածների և հայ երեխաներին չերքեզների կողմից վաճառքի հանելու փաստերն Անգլիայում թողել են չափազանց ծանր տպավորություն, և եթե դրան ավելանան նաև Զեյթունի կոտորածները, ապա իր կառավարությունը չի մնա պասիվ հանդիսատեսի դերում ու կդիմի զինված միջամտության[21]։ Անգլիայի այսօրինակ դիրքորոշումը մեծ անհանգստություն է առաջացնում թուրքական կառավարող շրջաններում։ Ինչ խոսք, որ Մեծ Բրիտանիայի սպառնալից տոնը կապված էր Օսմանյան կայսրության օրըստօրե վատացող քաղաքական դրության հետ։ Զեյթունի ապստամբության հատկապես վերջին շրջանում Թուրքիայում կրկին սկսվում էր ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վերելք և աստիճանաբար հասունանում էր բռնապետության հերթական ճգնաժամը։ Սուլթանը պարզ գիտակցում էր, որ ներքին դժվարությունները պակաս վտանգավոր չէին արտաքին քաղաքական վերը հիշատակված բարդություններից։ Սուլթանական կոտորածներին ի պատասխան ծավալվում էր հայության ազատագրական պայքարը։ Այնտեղ, որտեղ հնարավոր էր, ժողովուրդը զենք էր վերցնում պաշտպանելու իր ֆիզիկական գոյությունը։ Զեյթունի օրինակը մեծ ազդեցություն էր ունենում արևմտահայության վրա, պայքարի հանում նրան։ Սուլթանը փորձում էր Զեյթունը կտրել հայաշատ այլ կենտրոններից, կեղծ լուրեր էր տարածում ապստամբների անհաջողությունների և կորուստների վերաբերյալ։ Սակայն անցնում էին ամիսներ, իսկ արծվաբույնն անմատչելի և անպարտելի՝ շարունակում էր իր ուրա գամած պահել բոլորի ուշադրությունը։ Կայսրության մի շարք վայրերում հայ ֆիդայիները տեղական բնակչության օգնությամբ հաջողությամբ դիմակայում էին քրդական ավարառուներին և համիդիե ղորագնդերին։ Ըստ ամենայնի, նոր ելույթներ էին նախատեսվում Կ. Պոլսում։ Կառավարությունը դեռ չէր մոռացել, թե որքան բարդություններ առաջ բերեցին կոտորածների ժամանակ մայրաքաղաքի եկեղեցիներում հավաքված հայության հոծ զանգվածները, որոնք հրաժարվում էին թողնել եկեղեցիները՝ նոր չարդերից վախենալով[22]։ Տարբեր ճանապարհներով Արևմտյան Հայաստան և Կիլիկիա էին ներթափանցում նորանոր հայդուկային և զինատար խմբեր։ Ազատագրական շարժման շատ գործիչներ, հաշվի առնելով կոտորածների դառը փորձը, ավելի ու ավելի մեծ ուշադրություն էին դարձնում ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպմանը, նրա զինմանը, ձգտում էին խուսափել ցուցադրական ելույթներից ու անօգուտ կռիվներից։ Աստիճանաբար, կազմակերպված բնույթ էր ստանում Արևմտյան Հայաստան անցնելու և նրան զենքով ու մարտիկներով օգնելու շարժումը, որը ղեկավարում էին այնպիսի փորձված գործիչներ, ինչպիսիք էին Հրայրը (Արմենակ Ղազարյան), Թաթուլը (Արամ Արամյանց), Վազգեն Դեբոյանը և շատ ուրիշներ։

---

17 „Affaires Armeniennns . . . ", 1893—1897, p. 175.

18 Նույն տեղում, էջ 181։

19 «Turkey», № 2 (1896), p. 132.

20 „Affaires Armeniennes . . . ". 1893—1897, p. 172.

21 «Turkey», № 2 (1896), p. 290, 291.

22 Նույն տեղում, էջ 22, 23, 38, 39, 43, 44։

ժողովրդի ինքնապաշտպանությունը կազմակերպելու նպատակով ակտիվ նախապատրաստական աշխատանքներ էին տարվում Վանում։ Համատարած չարդերի վերաբերյալ լուրերը քաղաքի բնակչությանը ստիպում էին մտածելու դիմադրության մասին։ 1895 թ. աշնանը Սալմաստից Վան են անցնում Ներսեսի (Դ. Պեոզիկյան), Վազգենի և Նիկոլի (Ն. Տեր-Հակոբյան) խմբերը։ Քաղաքում էին Ավետիսյանի, Մարտիկի (Մարտիրոս Սարուխանյան), Պետոյի (Ալ. Պետրոսյան) ջոկատները։ Զևավորվում էր պայքարի միացյալ ճակատ[23]։ Որպես արդյունք, սուլթանական կառավարությունը, վախենալով հայկական նոր գոյամարտից, այդպես էլ ընդհուպ մինչև 1896 թ. գարունը կոտորածների ալիքը չտարածեց Վանի վրա։ Սասունը նույնպես, չնայած 1894 թ. ինքնապաշտպանության ժամանակ կրած ծանր կորուստներին, կրկին վեր էր ածվում ֆիդայական պայքարի կենտրոնի։ Փոքր Հայքում ու Սև ծովի շրջաններում հաջողությամբ գործում էր ժողովրդի ծոցից ելած Մինաս Օղլու (Հովհաննես Մինասյան) ֆիդայական խումբը։ Առասպելական հռչակ ձեռք բերած այս վրիժառուների ներկայությունն իսկ բավական էր, որ կանխվեին Սասունում և շրջակայքում նախատեսված ջարդերը[24]։

Նման օրինակներ կարելի է շատ բերել։ Ընդհանրապես պետք է նշել, որ Զեյթունի հերոսամարտի ընթացքում սուլթանը չէր համարձակվում կոտորածների ենթարկել այն շրջանները, որտեղ կարող էր հանդիպել կազմակերպված, լուրջ դիմադրության։

Միաժամանակ սրվում էր իրադրությունը Զեյթունի հարևան գավառներում և հատկապես Հաճնում։ Ըստ Հալեպի անգլիական հյուպատոսի տվյալների, արդեն 1895 թ. նոյեմբերին, քաղաքի հարևան գյուղերը ենթարկվում են ավերածությունների և բնակչությունը՝ շուրջ երկու հազար մարդ, այդ թվում կանայք, երեխաներ, ծերեր, մասսայաբար ապաստան է փնտրում Հաճնում[25]։ Բնական անառիկ դիրք ունեցող այս քաղաքը, ավելի քան հավանական էր, որ վերածվեր տարերային ապստամբության երկրորդ՝ թուրքերի համար չափազանց վտանգավոր, օջախի։

Ինչ վերաբերում է Զեյթունին, ապա հայության մեջ մեծ տարածում էին ստանում ապստամբներին օգնելու, մարտական խմբերի միջոցով շրջապատման շղթան ճեղքելու կոչերը։ Արաասահմանյան և հայկական պարբերական մամուլը չափազանցված տեղեկություններ էր հաղորդում զեյթունցիների ուժի ու թվաքանակի, նրանց ռազմական հաջողությունների մասին։ Զեյթունը հայության համար վեր էր ածվում ազգային հպարտության, ազատագրական շարժման անպարտելիության խորհրդանիշի։

Հանգանակություններ էին կազմակերպվում Զեյթունին օգնելու համար։ Առաջ էր քաշվում մարտական խմբերի՝ Կիպրոսի վրայով Կիլիկիա անցնելու ծրագիր։ Թեև նման փորձերը չափազանց ուշացած էին և որևէ արդյունք չէին կարող տալ, բայց արժանի են ուշադրության՝ ժամանակի մտայնությունը պարզելու տեսակետից։ Ցավոք, ինչպես Զեյթունի ապստամբության, այնպես էլ ճգնաժամի ողջ ընթացքում, հայ ազգային երկու կուսակցությունները, որոնք հավակնում էին ղեկավար դեր խաղալ ազատագրական պայքարում, չկարողացան հանգել միասնական, համաձայնեցված գործողությունների։ Նրանք փոխադարձ թշնամանքով, միջկուսակցական վեճերով ու կռիվներով թուլացրեցին առանց այն էլ ոչ մեծաքանակ մարտական ուժերը, ձախողելով պայքարի հաջող ելքը։

Թուրքերին անհանգստացնող ներքին բնույթի կարևորագույն խնդիր էր դարձել Բալկաններում ստեղծված լարված իրավիճակը, որն արդյունք էր հունական և մակեդոնական ազատագրական շարժումների վերելքի։ 1890-ական թվականները որոշիչ նշանակություն ունեցան Մակեդոնիայի բնակչության

---

23 «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, Երևան, 1981, էջ 261, 262։

24 Արսեն Կիտուր, Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, հ. Ա, Բեյրութ, 1962, էջ 113։

25 «Turkey», № 2 (1896), p. 273.

համար։ Երկրամասի աշխարհագրական դիրքը, պատմական անցյալը, բնակչության ազգային կազմի խայտաբղետությունը բալկանյան մի քանի պետությունների հիմք էին տալիս հավակնելու այս տարածքին։ Հույները, վկայակոչելով Մակեդոնիայի բյուզանդական անցյալը, այն դիտում էին որպես մեծ Հելլադայի անքակտելի մաս։ Հունական կառավարող շրջանների պանհելլենիստական երազանքներում Մակեդոնիան կոչված էր դառնալու այն առանցքը, որի շուրջ պետք է վերականգնվեր հզոր հունական կայսրությունը՝ Կ. Պոլիս մայրաքաղաքով[26]։

Որոշակի տարածքային նկրտումներ ուներ նաև Սերբիան։ Այն իր պրոպագանդան Մակեդոնիայում ուժեղացրեց 1888-ից սկսած և հասավ որոշակի հաջողությունների, հատկապես Սալոնիկի ուսանողության մեջ[27]։

Մակեդոնական ազատագրական շարժման վրա թերևս ամենամեծ ազդեցություն ուներ Բուլղարիան, որը, օգտագործելով երկրամասի բուլղար բնակչության համակրանքը, ձգտում էր կազմակերպված բնույթ տալ պայքարին և այն վերցնել իր հովանավորության ներքո։ Մակեդոնիայում և Բուլղարիայում ստեղծվում էին գաղտնի կազմակերպություններ ու միություններ։ Դեռևս 1893 թ. վերջին Սալոնիկում հիմնադրվում է հեղափոխական կոմիտե։ 1894 թ. սկսած գործում է Կենտրոնական կոմիտեն։ 1895 թ. մարտին Սոֆիայում գումարված մակեդոնական հեղափոխական կազմակերպությունների առաջին կոնգրեսը հիմնադրում է Մակեդոնական կոմիտե՝ Թ. Քիթանչևի գլխավորությամբ։ Նույն թվականի դեկտեմբերին կոմիտեն պառակտվում է երկու մասի՝ Գերագույն Մակեդոնական կոմիտեի և Մակեդոնական կոմիտեի[28]։ Այս կազմակերպությունների գործունեությունը հանգեցնում է նրան, որ Մակեդոնիայում ծավալվում է համաժողովրդական ազատագրական պայքար։ Երկրամասի բնակչությունը հիմնականում հանդես էր գալիս թուրքական գերիշխանության ներքո լայն ինքնավարության պահանջով[29]։ 1895 թ. սկսած կրկին աշխուժանում է հայդուկային շարժումը։ Խմբերը, որպես կանոն, անցնում էին բուլղարական սահմանից և իրենց հերոսական պայքարով նոր ուժ էին հաղորդում ազատագրական շարժմանը։ Սուլթանից զգալի ջանքեր էին պահանջվում Մակեդոնիան «խաղաղացնելու» համար։ Բ. Դուրը, անշուշտ, պետք է որ տեղյակ լիներ մակեդոնական կազմակերպությունների և հայկական կուսակցությունների միջև համատեղ գործողությունների վերաբերյալ տեղի ունեցող բանակցություններին։ Մշակվում էին միասնական պայքարի, փոխադարձ օգնության ծրագրեր, նախատեսվում էր միաժամանակյա ելույթներ կազմակերպել Մակեդոնիայում և Կ. Պոլսում։

Մակեդոնական շարժմանը զուգընթաց, ծավալվում էր հույների ազատագրական պայքարը, որի ճնշումը կապված էր ռազմական դժվարությունների և միջազգային մեծ բարդությունների հետ։ Կրկին ոտքի էր ելել «հունական մեծ կղզին»՝ Կրետեն, որը դարեր շարունակ, իսկապես որ հերոսական պայքար էր մղում անկախության, ապա Հունաստանի հետ վերամիավորվելու համար[30]։ 1894 թ. քրիստոնյա կառավարչի նշանակմամբ կղզու որոշ չափով բավարարված բնակչությունը չափազանց հուզվեց 1895-ին՝ վերջինիս հետկանչման պատճառով[31]։ Նույն՝ 1895 թ. ընթացքում, կղզում սկսվում են մասսայական ցույցեր, զինված ելույթներ, հնչում են ապստամբության կոչեր։

Կրետեի բնակչության արդարացի, ազգային պահանջները ջերմ ընդունելություն և աջակցություն էին գտնում Հունաստանում, ուր 1890-ական թվա-

---

[26] A. R. John, Marriott, The Eastern Question, Oxford, 1969, p. 409—410.

[27] „Documents and Materials on the History of the Bulgarian People", Sofia. 1969, p. 253, 254.

[28] Նույն տեղում, էջ 209։

[29] A. R. John Marriott, նշվ. աշխ., էջ 415։

[30] Նույն տեղում, էջ 375—377։

[31] Նույն տեղում, էջ 379։

կանների ֆինանսական մեծ ճգնաժամը, երկրի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ներթափանցումը, վերջապես, Կրետեի, Թեսալիայի և հունական այլ շրջանների ազատագրական շարժումներն առաջացրել էին ազգային դարթոնրի վիթխարի ալիք[32]։ 1894 թ. Աթենքում ստեղծված «Էթնիկա Հետերիա» գաղտնի կազմակերպությունը ձգտում էր սրել իրադրությունը Կրետեի շուրջը, հույս ունենալով տերությունների միջամտությամբ լուծել հարցը։ Այն հանդես էր գալիս Մակեդոնիայում «հունական շարժում» ծավալելու և այլ պանհելլենիստական ծրագրերով[33]։

1895 թ. պարզ էր դառնում, որ հունական կառավարությունը, ձգտելով սրել կոնֆլիկտը, գործը տանում էր դեպի խզում և ակտիվորեն նախապատրաստվում էր պատերազմի։ Նույն թվականի հունիսից իշխանության գլուխ անցած Թեոդորոս Դելյանիսի կառավարությունը բացահայտ թշնամական քաղաքականություն էր վարում Թուրքիայի նկատմամբ։

Կրետեի և Մակեդոնիայի հուզումները սուլթանից անհապաղ պահանջում էին լուծել Զեյթունի հարցը, քանի որ բալկանյան խորացող ճգնաժամի պայմաններում ապստամբության շարունակումը կարող էր ճակատագրական հետևանքներ ունենալ տնտեսապես և ֆինանսապես քայքայված կայսրության համար։ Թերևս սուլթանից վաղ և ոչ պակաս մտահոգությամբ այս ճշմարտությունը հասկացան եվրոպական դիվանագետները։ 1895 թ. դեկտեմբերի 19-ին մարքիզ Սոլսբերիին ուղղած հաղորդագրության մեջ Կ. Պոլսի անգլիական դեսպանը, անդրադառնալով Զեյթունի շուրջ ստեղծված լարված իրադրությանը, նշում է, որ խռովություններ են սկսվել Կրետեում ու սպառնում են ծագել Մակեդոնիայում, ֆինանսական դրությունը ավելի ու ավելի է վատանում և մտահոգություն կա, որ հաջորդ գարնան ընթացքում թուրքական կառավարությունն անընդունակ կլինի գլուխ հանելու իր դժվարություններից[34]։

Կար նաև զուտ ռազմական նկատառում։ Հույն-թուրքական պատերազմի վտանգը սուլթանին ստիպում էր զինվորական խոշոր միավորումներ կենտրոնացնել Բալկաններում, իսկ Զեյթունը շարունակում էր իր վրա գամել զգալի ուժեր։ Սալոնիկի զորաբանակը թույլ էր և չէր կարող դիմագրավել հունական բանակներին։ Եվ իսկապես, հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Հունաստանի դեմ տարած հաղթանակում մեծ դեր խաղացին նաև Զեյթունը պաշարած զորաբանակների զինվորները և նրանց հրամանատարը՝ Էդհեմ փաշան[35]։

Զեյթունի խնդրի կարգավորումը, սուլթանի «զիջողականությունը», մեծապես կապված էին լեռնականների հերոսական դիմադրության հետ։ Նրանք հիանալի հասկանալով, որ թուրքական բանակները քաղաք են շարժվում ոչ թե ապստամբությունը ճնշելու և մեղավորներին պատժելու, այլ արծվաբույնը լիովին ոչնչացնելու, բնակչությանը բնաջնջման ենթարկելու համար, ելել էին համաժողովրդական գոյամարտի։ Ճիշտ է, սուլթանական բանակները շրջապատել էին քաղաքը, կտրել հաղորդակցության բոլոր ճանապարհները, բայց այնդել, որ զորանոցի անկումից հետո լեռնականների ճակատագիրը որոշված էր և քաղաքը գրավելն այլևս ոչ մի դժվարություն չէր ներկայացնում, նշանակում է պարզապես խեղաթյուրել փաստերը։ Մասնավորապես, իրողությունն այդպես է փորձում ներկայացնել թուրք պատմաբան Ք. Գյուրունը, որն ամեն ինչ կապում է սուլթանի գթասրտությանն և մեծ տերությունների միջամտության հետ[36]։

---

32 «Советская историческая энциклопедия», т. 4, М., 1963, с. 757, 758.

33 John A. R. Marriott, Նշվ. աշխ., էջ 380։

34 «Turkey», № 2 (1896), p. 254.

35 Ա ղ ա ս ի, Նշվ. աշխ., էջ 337, «Զեյթունի պատմագիրք», էջ 773, 792, «Հայ ժողովրդի պատմություն», հ. VI, էջ 259։

36 Kamuran Gürün, Le Dossier Armenien, Societé Turque d' Histoire, Paris, 1983, p. 192.

Իրականում, պարենամթերքի ու ռազմամթերքի բացակայության պայմաններում զեյթունցիները կարողացան ապստամբության շուրջ չորս ամիսների ընթացքում ոչ միայն անառիկ պահել քաղաքը, այլև հսկայական կորուստներ հասցնել թուրքական զորաբանակներին։ Միայն 1895 թ. դեկտեմբերից մինչև հուվարի 15-ը, այսինքն այն ժամանակահատվածում, երբ, ըստ թուրք պատմաբանի, զեյթունցիների դիմադրությունը փաստորեն կոտրված էր, թուրքերը կորցրեցին շուրջ 20 հազար մարդ, որից 13 հազարը կանոնավոր բանակի զինվորներ[37]։ Լեռնականները փակել էին Զեյթուն տանող բոլոր ճանապարհները և հաջողությամբ պաշտպանում էին ռազմական կարևորություն ունեցող ս. Աստվածածնի վանքի դիրքերը։ Պաշարման ամեն օրը ծանր էր նստում թուրքերի վրա։ Ապստամբության կազմակերպիչներից մեկի՝ Աղասու (Կարապետ Թուր-Սարգսյան) վկայությամբ թուրքական «բանակը քայքայված էր. անկանոն զինվորները վհատած խմբովին կփախչեին, իրենց հետ տանելով կանոնավոր զինվորներեն շատերը»[38]։ Կառավարությունը Զեյթունի շուրջն էր կենտրոնացրել 4-րդ և 5-րդ զորաբանակների հիմնական մասը՝ 60 հազար ընդհանուր թվով, այդ թվում և ռեզերվները[39]։ Նոր բանակների առաքումը կապված էր ֆինանսական և քաղաքական լուրջ դժվարությունների հետ[40]։

Ռազմական անհաջողությունները և մարդկային մեծ կորուստները դրժգոհություններ էին առաջացնում զինվորների շրջանում։ Զեյթունի անառիկությունը, դիմադրողների անվեհերությունն ու քաջությունը վախ և հուսահատություն էին ծնում զինվորների մեջ։ Ապստամբության վերջին շրջանում սկսված սառնամանիքները, առատ ձյունն ու ձնաբքերը բոլորովին գցել էին նրանց մարտունակ ոգին[41]։ Զեյթունի շրջակա մուսուլմանական գյուղերից փախած բնակչությունը լցվելով Մարաշ այստեղ խուճապ էր առաջացնում[42]։ Ըստ Հալեպում անգլիական հյուպատոսի զեկուցագրի (1895 թ. նոյեմբերի 24) դեպի Անդրուն զեյթունցիների ձեռնարկած հաջող արշավանքից հետո դրությունը խիստ ծանրանում է և լուրջ խնդիր է դառնում կառավարության նրկատմամբ ռեզերվային զորքերի վերաբերմունքի հարցը. զինվորները, որ Զեյթուն էին բերվել հիմնականում Հալեպից, թողել էին «իրենց կանանց և երեխաներին ծայրահեղ աղքատության մեջ»։ Հյուպատոսը եզրակացնում էր, որ թերսնված, վատ հագնված, կարգապահությանը չվարժված այս բազմությունն իր ձեռքին զենք ունենալով, ավելի քան բնական է, որ կապստամբի[43]։

1896 թ. հունվարի 10-ին, երբ ապստամբների ու թուրքական բանակների միջև զինադադար էր կնքվել, սուլթանն անձամբ դեսպաններին խնդրում է արագացնել իրենց ներկայացուցիչների ուղարկումը՝ նպատակ ունենալով իր զորքերին փրկելու անողոք եղանակի պատճառած տառապանքներից[44]։ Չէ՞ որ այդ բանակը նրան հարկավոր էր Բալկաններում։

Հունվարի 30-ին Զեյթունում սուլթանական կառավարության և լեռնականների միջև վեց պետությունների ներկայացուցիչների միջնորդությամբ ստորագրվում է համաձայնագիր։ Ըստ այդ համաձայնագրի ապստամբները ստանում էին ընդհանուր ներում, Բ. Դուռը երաշխավորում էր զեյթունցիների կյանքի և ունեցվածքի ապահովությունը. հանձնելով մարտական զենքը, զեյթունցիներն իրավունք էին ստանում պահելու իրենց որսի հրացանները, դա-

---

37 Stephen G. Svajian, A Trip Through Historic Armenia. New York, 1977, p. 333.

38 Աղասի, նշվ. աշխ., էջ 328։

39 «Turkey», № 2 (1896), p. 228.

40 Լևոն Ճերահյան, Քաջն Աղասի և 1895-ի Զեյթունի հաղթական պատերազմը, Մարսեյլ, 1952, էջ 77։

41 Աղասի, նշվ. աշխ., էջ 308—311։

42 «Turkey», № 2 (1896), p. 228.

43 Նույն տեղում, էջ 229։

44 „Affaires Armeniennes . . .". 1983—1897, p. 194, 195.

շուններն ու ատրճանակները. հարևան մուսուլման բնակչությունից նույնպես պետք է հավաքվեին մարտական հրացանները. Զեյթունում նշանակվելու էր քրիստոնյա գայմագամ։ Զեյթուն ապաստանած հայ գյուղացիները, թուրք զորահրամանատար Էդհեմ փաշայի երաշխավորությամբ և հյուպատոսների հսկողության ներքո վերադառնալու էին իրենց բնակավայրերը։ Միաժամանակ սուլթանը, «գթասրտությունից» ելնելով, հրաժարվում էր նախորդ տուրքերից և խոստանում կրճատել «ամիրի» հարկը. զորանոցը ևս վերաշինվելու էր պետության կողմից[45]։ Միայն փլուզվող, կործանման եզրին գտնվող պետությունը կարող էր իրեն թույլ տալ նման համաձայնագիր ստորագրել սեփական հպատակների հետ և դե ֆակտո ճանաչել նրանց որոշակի իրավունքները։

Եվ սուլթանին կրկին անգամ դժվարին կացությունից դուրս գալու հնարավորություն տվեցին եվրոպական պետությունները։ Սա նկատի ուներ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը, երբ դեռևս 1895 թ. դեկտեմբերի 24-ին իր դեսպանին հեռագրում էր. «Ես ցանկանում եմ հուսալ ձեզ հետ, որ Դուռը կհասկանա, թե Զեյթունի խնդրում դեսպանների կիսապաշտոնական միջամտությունը որքան է նպաստում իր շահերին, կանխելու համար աղետը, որից կարող էին առաջանալ նոր և ծանր բարդություններ»[46]։

Այդ «նոր և ծանր հետևանքներից» վախենալով էր, որ եվրոպական դիվանագիտությունը կրկին անգամ դավաճանելով իր հռչակած դեմոկրատիայի, մարդասիրության և արդարության սկզբունքներին, հանդես եկավ արյունոտ սուլթանի կողքին՝ ընդդեմ ազգային-ազատագրական, առաջադիմական շարժումների։

ЗЕЙТУНСКИЕ СОБЫТИЯ И СОГЛАШЕНИЕ ОТ 30 ЯНВАРЯ 1896 г.

ЛЕВОН МКРТЧЯН

Резюме

Зейтунское восстание 1895—1896 гг. занимает особое место в истории освободительного движения армянского народа. Зейтунцы восстали против турецкого гнета в трагическое для армян время, когда султан пытался осуществить детально разработанный план уничтожения целого народа. Восстание вспыхнуло в разгар дебатов вокруг Армянского вопроса. На Ближнем Востоке вновь скрестились важнейшие интересы империалистических группировок. «Покровительницей» армян на сей раз выступила Англия.

Героическая борьба зейтунцев с двумя регулярными армиями и с десятками тысяч мусульманских отрядов увенчалась успехом. Султанская Турция, при вмешательстве шести великих держав, вступила в переговоры с повстанцами и подписала позорное для империи соглашение.

Объективные причины, вынудившие Порту пойти на такую уступку, были связаны с внешнеполитической ситуацией и с глубоким внутренним кризисом Османской империи.

---

[45] „Turkey", № 8 (1896), Further Correspondence Relating to the Asiatic Provinces of Turkey, London, August 1896, p. 52, 53.

[46] „Affaires Arméniennes . . . ", 1893—1897, p. 193.